

488

2 (01)
S - 99



03 AUG 2009 Ծան.

ԿՐՈՆԻ

ԵՒ

ԿՐՈՆԻ ԳԻՏՈՒԹԵԱՆ

ԷՈՒԹԻՒՆԸ

Ը Ա Տ

ՏՐԵՈՒԶԻ

Փ Ա Խ Ա Դ Բ Ե Ց

ԵՐՈՒԱՆԴ ՎԱՐԴԱՊԵՏ

Արտասպած Արարատ ամսագրից

19/966

Վ Ա Ղ Ա Ր Ճ Ա Պ Ա Տ

Տպարան Մայր Աբովյան Սրբոյ Եղմիածնի

1907

H 3-3872

2/01

S-99

ԿՐՈՆԻ


ԵՒ

ԿՐՈՆԻ ԳԻՏՈՒԹԵԱՆ

ԷՌԻԹԻՒՆԸ


Ը Ս Տ

ՏՐԵՅԼՉԻ



Փ Ա Խ Ա Դ Բ Ե Ց

ԵՐՈՒԱՆԴ ՎԱՐԴԱՊԵՏ



Արտասպած Արարատ ամսագրից



Վ. Ա. Ղ. Ա. Ր Շ Ա. Պ Ա. Տ

Տպարան Մայր Արքուն Սրբոյ Էջմիածնի

1907

ԿՐՈՆԻ ԵԽ ԿՐՈՆԻ ԳԻՏՈՒԹԵԱՆ ԼՈՒԹԻԽԻՆԸ

ՀԱՅ ՏՐԵՅԼԻ *

Ներածութիւն. Կրօնի գիտութիւնը միւս բոլոր քաղաքակրթական գիտութիւնների նման այն գժուարութիւնն ունի, որ նրա հիմնական նախագրեալները սկզբից և եժպէտք է որոշել, որովհետեւ նրանցից է կախուած այդ գիտութեան ամբողջ կազմութիւնը։ Խնդիրն այն է թէ ինչպէս պէտք է ըմբռնել մարդկային հոգու բոլոր խոշոր քաղաքակրթական ստեղծագործութիւնները. արդեօք նորա հոգու ինքնուրոյն, անկախ ունակութիւնների և ուժերի զարդացման և ներքին անհրաժեշտութիւնից առաջ եկող մըտածմունքների ու արժէքների հետևանք են, թէ հոգին ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի փորմալ կարողութիւն, որի շնորհիւ արտաքին իրական երևոյթները ըստ կարելւոյն իրական կերպով ըմբռնուելուց յետոյ, բնական կապակցութեան մէջ են դրում և այդ բնական զուգորդութիւնը ծառայեցնում են ինքնապահպանութեան և ցեղական յառաջադիմութեան մարդկային նպատակներին։ Առաջին դէպքում մեր առաջ կլինին բանականութեան խորհրդաւոր, սկզբնական և միշտ յառաջադիմող ունակութիւններ և ձգտումներ, որոնց զարդացմամբ դոյանում են քաղաքակրթական մեծ ստեղծագործութիւնները՝ ընտանիք, պետութիւն, հասարակութիւն, իրաւունք, գեղարուեստ, գիտութիւն, կրօն և բարոյականութիւն։ Երկրորդ դէպքում մեր առաջ է միայն արտաքին աշխարհի առարկայական

*) Wesen der Religion und der Religionswissenschaft von Ernst Troeltsch—(Kultur der Gegenwart, Hrsg. von Paul Hinneberg; Teil I. Abteilung IV, Die Christliche Religion. Berlin und Leipzig, 1906. S. 461—491).



40490-63

փաստերի կանոնաւոր և միատեսակ զուգորդութիւնը, իսկ ներքին աշխարհում չունենք մենք և ոչ մի գաղտնիք. այստեղ ամբողջ ձգտումն է այդ կանոնաւորութիւնը ճանաչել և մարդկային ցեղի պահպանութեան համար ծառայեցնել: Առաջինը իդէալիստական ըմբռնումն է, որը հոգուն որակական ստեղծագործող ոյժեր և առանձնայատուկ հոգեսոր արժէքների յառաջացումն է վերագրում, իսկ վերջինը պողիտիւիստական հասկացողութիւնն է, որը ամենից առաջ միայն հաստատուն իրողութիւնները և նըրանց օրինական զուգորդութիւնն է ճանաչում և ապա այս իրողութիւնները յանձնում է կամքին կարգաւորելու, որի ժամանակ սակայն միակ արժէքը դարձեալ մարդկային կեանքի պահպանութիւնն ու կատարելագործումն է: Կան նաև ուրիշ ըմբռնումներ, որոնք կամենում են ազգեցութիւն ձեռք բերել կրօնի գիտութեան մէջ, բայց նոքա արժէք չունին և սկզբից և եթ պէտք է որոշուի, թէ վերև յիշուած երկուսից ո՞ր հասկացողութեան նախադրեալներին է հետեւում կրօնի գիտութեամբ զբաղուղը կամ կրօնի էութիւնը բացատրողը: Այդպիսի որոշման համար նշանակութիւն ունի այն անձնական համոզումը, թէ հոգեսոր կեանքի մէջ կան բոլորովին առանձնայատուկ, նոր իրոշութիւններ առաջ բերող ոյժեր, կամ այն հիմնական դաւանանքը, թէ իսկական գիտութիւնը միայն հաստատուն իրողութիւնների օրինական կապակցութիւնն է և հոգին միայն այն չափով անկախ է ու ինքնորոշման տէր, որչափ որ այդ չի հակասում վերևի հիմնական նախադրեալին. իսկ ինչ որ դրանից աւելի է, լոկ մարդկային երեակաշութեան անարժէք ծնունդ է:

Մեր այս համառօտ ակնարկը հետեւում է բացարձակապէս իդէալիստական աշխարհայեացքին և մերժում է պողիտիւստականը, որովհետեւ քաղաքակրթութեան իդէալական բովանդակութիւնների (Inhalt) իրական տպաւորութիւնը հակառակում է այդպիսի ըմբռնման, որովհետեւ նրա հիմնական դաւանանքը մի նատուրալիստական նախադրեալ է, առանց ստիպողական հիմնաւորման, որը գեռ

արտաքին աշխարհի համար էլ միակ անվիճելին չէ, և վերջապէս որովհետեւ պողիտիւիզմը հակասում է իրեն, ընդունելով հոգու աւտոնոմիայի և ինքնորոշման մի որոշ, թէ չնշին չափ. դրանով նա միանդամայն ցոյց է տալիս, որ անհնար է բոլորովին ուրանալ այն հոգեսոր, շատ աւելի հարուստ իրականութիւնը, որ աշխատել է նա ամեն կերպ ոչնչացնել և աննշանակ ցոյց տալ:

Այդ պատճառով էլ պէտք է կրօնի պողիտիւստական տեսութիւնը մերժել, որը կրօնի մէջ էլ ուրիշ ոչինչ չէ տեսնում, բայց եթէ մարդկային մտածողութեան դործունէութիւն՝ արտաքին երեսյթները զուգորդելու և այդպիսի ծանօթութիւնները մարդկային անհատական և տեղական նպատակների համար գործադրելու: Այդպիսով կրօնը դառնում է մարդկային նախնական մտածողութեան արդիւնք, երբ մարդկութիւնը զուրկ արտաքին իրականութեան իսկական գիտական մեկնութիւնից, ջանք է գործ դնում իւր նախնական պարզ մտածողութեան միջոցով այդ իրականութիւնը բացատրել, ստեղծում է անձնաւորեալ աստուածներ (որովհետեւ ուրիշ կերպ մտածել գեռ չէ կարող) և այդ աստուածներին դարձնում է մարդկային նպատակներին ոյժ ու զօրութիւն տուող և նրանց իրադորժումը ապահովեցնող: Կրօնն ուրեմն մի տեսակ նախնական պարզ գիտութիւն է, որ անխուսափելիորէն պիտի գոյութիւն ունենայ մարդկային մտածողութեան այդ նախնական շրջանում և նոյն իսկ օգտակար էլ է, բայց որը իսկական գիտութեան առաջ գալով հետզհետէ չքանում է: Կրօնի գիտութիւնն էլ այդ պատճառով գառնում է այս գէպքում միայն մարդկային նախնական մտածողութեան զարգացման պատմութեան մի ուսումնասիրութիւն, իւր սկզբնաւորութիւնից սկսած մինչև դրական գիտութիւն դառնալն ու գիտական բարոյագիւտութիւն յառաջ բերելը: Դրական գիտութեան պարտքն է ուշադրութիւն դարձնել ուրեմն կրօնի սկզբնաւորութեան, նրա սոցիալական գործունէութեան, առանց որի նա այնպիսի մեծ ազգեցութիւն ձեռք բերել չէր կարող,

և վերջապէս նրա ոչնչացման՝ կազմալուծման վրայ:

Այս տեսութեան մէջ ամենից առաջ անկարելի է ընդունել այն նախագրեալը, որի վրայ կառուցուած է ամբողջ շէնքը: Մարդ ազատութիւն պէտք է ունենայ կրօնի էութիւնն ըմբռնելու համար, իսկ այդ տեսութեան մէջ արդէն սկզբից և եթ յայտնի է, թէ ինչ է կրօնը: Այս տեսութեան համար չկայ ուրիշ ոչ մի հոգեսոր գործունէութիւն, բայց եթէ զուգորդող մտածողութիւնն և այդ մտածողութեան գործադրութիւնը մարդկային ցեղի ինքնապահպանութեան կամքի միջոցով: Կրօնն էլ ուրեմն այդպիսի մի մտածողութիւն պիտի լինի, միայն սկզբնական մարդկային մտածողութիւնից յառաջ եկած, անձնաւորեալպատշերացումների շրջանը գեռ չանցած և գեռ ևս չսովորած մարդկային նպատակները զանազաննել նրանց նկատմամբ բոլորովին անտարբեր տիեզերքից: Այս ըմբռնումը մերժելով և ընդունելով, որ անկարելի չէ առանձնայատուկ որակական հոգեոր ընդունակութիւնների ու բովանդակութիւնների գոյութիւնը, միջոց է տրւում ճանաչելու, որ կրօնը իւր ծագմամբ, զարդացմամբ ու կազմալուծմամբ միայն մի պատմական, անցողական պրոբլեմ չէ, այլ իւր ներքին բովանդակութեամբ և քաղաքակրթութեան նըշկատմամբ ունեցած նշանակութեամբ կարող է մշտական և իրական լինել: Եթէ այդպէս է, չի կարելի ուրեմն առանց այլայլութեան, առանց մանրամասն վերլուծութեան ենթարկելու իմանալ և ըմբռնել, թէ ինչ է կրօնը իսկապէս: Եւ այդ պատճառով էլ նրա էութիւնը կարելի է ճանաչել գլխաւորապէս իրենով, քննելով ու համեմատելով իւր իսկ վկայութիւնները իրեն մասին: Հետախուզողի ձեռք ու ոտքը այստեղ արդէն կապուած չէ. նա սկզբից և եթ չդիտէ, թէ ինչ չէ կարող լինել կրօնը. նրան անյայտ է, թէ նա չէ կարող ամենեւին այն լինել, ինչ որ ինքը ցոյց է տալիս Վերլուծութիւնը կապուած չէ մի արդէն պատրաստի հաստատուն աշխարհայեացքի հետ, որի համաձայն և պէտք է կրօնի ըմբռնումը կարդաւորել, այլ նիւթից իրենից պէտք է տեղեկութիւն ստացուի իւր

էութեան մասին, և այդ միջոցով պէտք է պարզուի, թէ ինչ է այն ըստ իւր գիտակցութեան:

Այդ բանի պարզուելուց յետոյ է միայն գալիս երկորդ հարցը՝ թէ ինչպէս է տեղաւորւում այս առանձնայատուկ էութիւնը միւս իրականութեան մէջ, արդեօք համաձայն է նրան և ինչ փոփոխութիւններ պիտի կրէ դեռ ևս: Գլխաւորապէս պոզիտիվիզմի չնորհիւ հաւաքուած փաստերի ահագին կոյտը իսկական հետազօտութեան համար միայն նիւթ կարող է ծառայել և գլխաւոր հարցն է գառնուում այժմ, թէ իսկապէս ո՞րն է կրօնականը այդ ընդհանուր անուամբ կրօն կոչուող խիստ խայտաբղէտ և զանազանակերպ երեսյթների մէջ, ինչպէս պէտք է գլունել զուտ կրօնականը և ինչպիսի նշանակութիւն է ստանում, զարդացման խորութիւն ու հետևանքներ յառաջ բերում այս կրօնականը իւր պատմական ծաւալման ընթացքում: Ապա նոր գալիս են միւս հարցերը՝ նրա բովանդակութեան ճշմարտութեան, զարդացման օրէնքների ու նպատակների մասին և վերջապէս նրա յարաբերութիւնը քաղաքակրթական միւս երեսյթների հետ:

Առհասարակ պէտք է հեռու մնալ այս կամ այն մետաֆիզիքական գաղափարը սկզբից և եթ, առանց քըննութեան, հոչակելու իբրև կրօնական ճշմարտութիւն, մանաւանդ որ մեր ժամանակում այդպիսի մետաֆիզիքիան շատ սառն և անտարբեր կերպով է ընդունելում և գիտութիւնն աշխատում է գլխաւորապէս իրականը, թանձրացեալն ու փորձի ենթական շինել ուսումնասիրութեան նիւթ, այս գէպքում ուրեմն կրօնական երեսյթները: Այդ է պատճառը, որ կրօնի փիլիսոփայութիւնը դարձել է այժմ կրօնի գիտութիւն, մետաֆիզիքայի ճիւղը՝ կրօնական գիտակցութեան իրողութիւնների անկախ ուսումնասիրութիւն, բարձրագոյն գիտութիւն՝ մի նոր մասնաւոր գիտութիւն: Պոզիտիվիզմն էլ իւր կողմից մեծ օգնութիւն է մատուցել այսպիսի գրութիւն յառաջ բերելուն, ցոյց տալով որ մետաֆիզիքական կրօնի փիլիսոփայութիւնը իսկապէս զօրեղ կենաւունակութիւն ունեցող կրօնական գաւ-

զափարների նսեմացումն է միայն։ Այդպիսով երկու կողմից էլ աղատութիւն պիտի տրուի կրօնի գիտական հետախուզութեանը, որպէս զի հնարաւոր լինի պարզել, թէ ինչպիսի առանձնայատուկ որակական հոգեկան կարողութեան արդիւնք է կրօնը և ինչպէս է պատկերանում այն եւր սեպհական գիտակցութեան ու կամքի մէջ։

I. ՊԱՐԶ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԴԱՅՄԱՆ ԵՆԹԱՐԿՈՒԱԾ ԿՐՕՆ

Այս հարցերի պատասխանը տալու համար ամէնից առաջ հարկաւոր է մի այնպիսի անկախ հայեցք ձեռքբերել կրօնի վրայ, ուր գեռ ևս գիտական համեմատութիւններն ու բացատրութիւնները, զուգորդութիւններն ու հետեւութիւնները գեր չեն խաղում ամենենին և ուր որ գեռ հնարաւոր է առարկային իրեն խօսեցնել։ Բայց այդպիսի դրութիւն ստեղծելն էլ շատ դժուար է, որովհետեւ ամենանախական կրօնն էլ ճիշտ այն ձեռվ շաղկապուած է նախնական գիտական մտածողութեան հետ, ինչպէս որ իւրաքանչիւր կուլտուրական կրօն կապուած է իւր շրջանի բարձրագոյն կուլտուրայի մտածողութեան՝ փիլիսոփայութեան և տիեզերքի բացատրութեան հետ։ Թէ կրօնը կապակցուած է լինում նաև բարոյական, գեղարուեստական, իրաւական, քաղաքական և սոցիալական ըմբռնումների հետ, բայց այստեղ կրօնականը ջոկելը սովորաբար շատ աւելի հեշտ է, քան թէ երբ կապուած են լինում Աստուծոյ գաղափարն ու տիեզերքի բացատրութիւնը։ Եթէ գիտութեան էութիւնն է զանազան ձևերով համեմատել, յարաբերել կամ զուգորդել և այդպիսով ընդհանուր գաղափարներ յառաջ բերել, որոնց միջոցով հնարաւոր է դաւանում լուսաւորել և ճիշտ կերպով ըմբռնել առանձին երևոյթները, այն ժամանակ գիտութեան աղղոցութիւնից գեռ ևս աղատ կրօնի էութիւնը պէտք է լինի, որ նա նախ կերպով, առանց համեմատութիւնների

և յարաբերութիւնների հետեւ կրօնական գաղափարի անմիջական մղմանը կրօնի անմիջական, նախ երևոյթները պէտք է ուրեմն այնտեղ որոնել, ուր գեռ ևս զարգացած չէ գիտութեան ձգտումը և չեն հետաքրքրում ընդհանուր կապակցութիւնները, այլ միայն այն չափով հետաքրքրութիւն կայ կեանքի ու մտածողութեան միւս երևոյթների նկատմամբ, որչափ անհրաժեշտ է այն նըրանց վրայ աղղեցութիւն դործելու և տիրապետելու համար. պէտք է մանաւանդ այնտեղ որոնել, ուր գոյցութիւն ունի մի զօրեղ կրօնական զգացումն։ Կրօնական գաղափարների հսկայական ստեղծագործութիւնը պէտք է յառաջ եկած լինի մի շատ զօրեղ նախ ներքին մղումից մեղ անծանօթ նախամարդկութեան մէջ. այդպատճառով էլ գեռ ևս հնարաւոր է ընդունել պարզ կրօնական գաղափարներ այնտեղ, ուր այդ ձգտաման վերջին մնացորդները գեռ չեն անհետացել։ Այս բանին վկայ կարող են լինել իսկական նախնական վիճակի մէջ մնացած աղղերը և հնագէտների ու բանասէրների գիւտերի շնորհիւ մեղ մատչելի գարձած պատմութեան հնագոյն շրջանները։ Բայց այստեղ էլ շատ զգոյշ պէտք է լինել անձնաւորող մտածողութիւնն ու առասպելը իսկական կրօնի հետ շշփոթելու և ամեն կրօնական ծէս ու սովորոյթ իրեւ կրօն չբացատրելու համար։ Ամեն հսկացողութիւն անտեսանելի և իրականութեան վրայ աղղեցութիւն ունեցող ոյժերի մասին կրօնական չէ ըստ ինքեան։ Կրօնական նշանակութիւն է ստանում այն միայն պաշտամունքի մէջ, իսկ պաշտամունք յառաջ է գալիս միայն այստեղ, ուր այդ ոյժերը որևէ կերպով յայտնագործում են իրենց մարդկանց և այդպիսով պաշտամունքի առարկայ գառնում։ Որոշ իրողութիւններ և տպաւորութիւններ են պէտք, որպէս զի յառաջ գայ այն կրօնական հայեացքը, թէ այս ինչ կամ այն ինչ զօրութիւնը կրօնական նշանակութիւն ունի և կամենում է ժողովականական գալ յարատել կրօնական յարաբերութեան մէջ մանել մարդկանց հետ։

Ուրեմն ինչ չափով որ այս յայտնութեան հաւատը և նրա հետ կապուած պաշտամունքը զօրեղ, պարզ և անմիջական ներգին իրականութիւն են դառնում, այն չափով միայն կարելի է խօսել նախ կրօնի մասին և մենք մօտենում ենք նրան այնքան, որքան յօյս ունինք պաշտամունքը և նրա նախորդ ու հետեւորդ զգացումները ըմբռներու։ Պաշտամունքի, աղօթքի և արարողութիւնների մէջ է թագնուած պարզ կրօնական ըմբռնումը, եթէ նորա սովորական չեն դարձել և իրեւ սովորոյթ չեն գործադրուում։ Այդ պատճառով էլ կրօնի զուտ ազգագրական և մարդաբանական հետազոտութիւնը շատ մեծ չափով կարող է աշքը սրել, որովհետեւ այստեղ գիտական հետաքրքրութիւնն ու արուեստը գեռ շատ քիչ է զարդացած, թէեւ պէտք է միշտ զգուշութեամբ օգտուել նախ կրօնի համար նրա տուած ցուցումներից։ Առասպելական մտածողութիւնն էլ մի տեսակ գիտութիւն է, որ յաճախ կարող է և հետամուտ է գեղարուեստական երեակայութիւն (Phantasia) գառնալու, որ իւր երկու ճիւղաւորութիւններով էլ մեծ ազգեցութիւն է գործել կրօնի վրայ։ բայց նրա կապակցութիւնը շատ էլ ամրակուռ չէ և այդ պատճառով էլ հեշտ է այսաեղ պարզ կրօնական հասկացողութիւնների կազմակերպութիւնը։

Ապա պարզ կրօն գտնել կարելի է այն բոլոր մեծ, յատկապէս կրօնական անձնաւորութիւնների մէջ, որոնք մեծ մասամբ ժողովրդների այն դասերից են դուրս դալիս, որ գեռ ևս գուրս է գիտութեան ազգեցութեան շրջանից և որոնց ամբողջ կեանքն ու գործունէութիւնը ուրիշ ու չինչ է, եթէ ոչ բացարձակ ենթարկումն իրենց վրայ բռնովին իշխող, անկասկածելի և անապացոյց կրօնական գաղափարի։ Դոքա կրօնի հիմնագիրներն ու բարենորոգիչները, մարդաբէններն ու տեսանողները, քարոզիչներն ու միսիսնարներն են, որոնք իրենց կրօնական ինքնագիտական մէջ շատ թէ քիչ զիտնականօրէն յառաջ դնացած կարող են լինել, բայց որոնք կրօնի մէջ ուշադրութեան են առնում միայն կրօնական գաղափարը, և

իրենց ինքնավստահութեան (Selbstgewissheit) համար ամենակին կարիք չեն զգում ընդհանուր ճշմարտութիւնների կամ իմացութիւնների։ Այստեղ էլ ի հարկէ Աստուծոյ գաղափարը շատ անդամ նոյնն է, ինչ որ նախահայրերինը և գտնուում է ժամանակի աշխարհայեացքի ընդհանուր շրջանակի մէջ, բայց գլխաւորը այստեղ ամեն անդամ Աստուծոյ կողմից յայտնուած յարաբերութիւնն է, յայտնութիւն, լուսաւորուելը, մի իրական աստուածային զօրութիւնից բռնուելը և իրեւ դորա հետեւանք՝ պաշտամունք, աղօթք, յարաբերութիւն, միութիւն աստուածային էակի հետ — մի խօսքով այնպիսի գրութիւններ, որոնք սերտ կերպով կապուած են առանձնայատուկ կրօնական զգացումների և տրամադրութիւնների հետ։ Ուստի մասին համար նշանակութիւն ունին նաև զանազան կրօնական ընկերակցութիւնները և վերջապէս հետազոտողի անձնական ներքին փորձը և ինքնազննութիւնը, երբ մանաւանդ նոքա կապ չունին փիլիսոփայական մտահայեցողութեան հետ, այլ ներկայանում են իրեւ զուտ կրօնական զգացումն, որի մէջ հետազոտողը աշխատում է հնարաւոր եղածի չափ խորը թափանցել։

Հետազոտութեան ամենամօտիկ և իսկական նիւթը այդ երեսյթներն են։ Եթէ նոցանից չհեռանանք, յօյս կայ, որ կարողանանք քաղաքակրթութեան այս ճիւղի բնոյոց և էական կողմերը ըմբռնել։ Բացարձակ պարզութեան (Naivität) մասին ի հարկէ խօսք լինել չէ կարող, բայց այնքան պարզութիւն կլինի, որ հնարաւոր կդառնայ հետախուզութեան ուշադրութիւնը կենդրունացնել ամենաէական և գլխաւոր երեսյթների վրայ։ Պէտք է զգոյշ լինել սակայն այնպէս դատելուց՝ թէ որովհետեւ պարզ կրօնի միջոցով հնարաւոր է այդ երեսյթի հիմնական դծերը երեւան հանել, այդ պատճառով էլ պարզ կրօնը իսկական, մաքուր ու ճշմարտագոյն կրօնն է, հակառակ գիտութեան միջոցով մշակման ենթարկուած կրօնի, որը այդպիսի դէմքում պիտի լինէր կեղծ, անճիշտ և օտար երեսյթների հետ խառնուած։ Ընդհակառակը պարզ կրօնն է, չնորհիւ գիտու-

թեան աղդեցութիւնից ազատ լինելուն, մեծ մասամբ միակողմանի, քաղաքակրթութիւնից զուրկ, նեղսիրտ, խառնակ և անհամաձայնութիւններով լիւ Բացառութիւն կազմում են այս գէպքում միայն շատ քիչ մեծ մարդիկ, որնց մէջ իսկական պարզ կրօնականութեան հետ միասցած է մի նոյնքան պարզ, մեծ, մաքուր և շիտակ հոգեկան ունակութիւն, առանց որ և է եսասիրութեան և անձնական իրաւասիրութեան։ Այդպիսիների համար գիտութիւնն ու իւր ձեռք բերած բարիքները օտար են բոլորովին և զուտ գիտական մտածողութիւնը նրանց հետ միանալ չէ կարող, բայց նոքա կրում են հանճարի կնիքը, որի համար Շիլերն ասում է. «Քեզ գիտութիւնը ոչինչ սովորեցնել չէ կարող, նա թող քեզնից սովորի»։ Նոցանման են այն աւելի փոքր հոգիները, որոնք պարզ ու միամիտ կերպով ենթարկում են կրօնական մղմանը, և այդ պատճառով էլ մնացած կեանքը իւր երեսյթներով, որ չեն ըմբռնում, թողնում են իրենց Աստուծոյ կամքին ու խընամքին։ Բայց սոքա բացառութիւններ են և պարզ կրօնի մէջ ընդհանրապէս այդպէս չէ. այդ պատճառով էլ կարենոր ու անհրաժեշտ է գիտական զարգացումը՝ կարդ, հանդարտութիւն, համաձայնութիւն և համբերատարութիւն առաջ բերելու, միտքն ընդլայնելու և արտաքին աշխարհի վրայ էլ ուշադրութիւն հրաւիրելու՝ և կրօնը նրա երեսյթների հետ համաձայնեցնելու համար, վերջնը մանաւանդ կարենոր է նոյն իսկ ամենամաքուր և ամենամեծ կրօնական յայտնութիւնների համար, որպէս զի նըրանք այդ յայտնութեամբ բռնուած գրգռուած ամբոխի նորհիւ նեղսիրտ հերձուած և քաղաքակրթութեան թըշնամի զօրութիւն չդառնան։ Քրիստոնէութիւնը իւր համաշխարհային աղդեցութիւնը ձեռք բերեց միայն միանալով հին յունա-հռոմէական քաղաքակրթութեան հետ, այն ինչ Կոպտերի և Եթովպացիների մէջ քրիստոնէութիւնը այլառեռուեց բոլորովին։ Խոլամական կրօնը զարգացաւ պարուկական և յունական կրթութեան աղդեցութեան տակ և միայն տաճիկների շնորհիւ գարձաւ

ծանիչ հակակուլտուական դօրութիւն։ Ուրեմն պարզ և գիտութեան աղդեցութեամբ զարգացած կրօնների մէջ բաժանում դնելը նշանակութիւն ունի միայն կրօնի գիտութեան հիմքը դնելու համար, որպէս զի հնարաւոր լինի կրօնաւկան կեանքի բնորոշ ու էական գծերը ըմբռնել ու որոշել և ոչ թէ մակերեսութային կերպով գատելով, կործանիչ աղդեցութիւն անել կրօնի վրայ։ Կրօնը գիտականօրէն հետազոտելու նպատակն էլ անշուշտ կրօնի վրայ աղդեցութիւն անելն է. որովհետեւ այստեղ էլ կորիզն ու կեղեց որոշել պէտք է, և մանաւանդ անհրաժեշտ է կրօնաւկան կեանքը կերպի միւս երևոյթների հետ հաշտեցնել ու նրանց յարաբերութիւնը պարզել։

Մարդկային կուլտուրայի բոլոր ստեղծագործութիւններից ամէնից ուշ յառաջ է եկել գիտութիւնը. միւսները նախ զօրեղ ուժերի ստեղծագործութիւններ են՝ գիտութիւնից շատ առաջ հանդէս եկած։ Բայց վերջի վերջոյ գիտութիւնն ասպարէզ է գալիս, որովհետեւ անհրաժեշտ է այն, որովհետեւ անհնար է նախ չէղովութեան մէջ մընամքին։ Վերջապէս որսվիճետեւ պէտք է միացնել և որոշնալ և վերջապէս որսվիճետեւ պէտք է միացնել և որոշ փոխադարձ համաձայնութեան մէջ դնել մարդկային կուլտուրայի տարբեր բովանդակութիւնները։ Կեանքի բոլոր երևոյթների առողջութիւնն ու էնէրգիան յառաջ է գալիս նախ ոյժերից և նրանց ստեղծագործութիւնների շընորհիւ և առանց այդ ուժերի նորոգութեան նոքա գոյցութիւն պահել չեն կարող, բայց գետութիւնը բերում է կարգաւորութիւն, որոշութիւն, խաղաղութիւն, ընդհանուր կապ և փոխադարձ արդիւնաւորումն։ Զանազան ուժերի գիտական կարգաւորութիւնը միմեանց հետ ունեցած յարաբերութեան նկատմամբ նոյնչափ կարենոր է, որոցած յարաբերութեան կերպով լիրեն նախ ուժերից ու նրանց ստեղծագործութիւններից, բայց գրանից յետոյ պէտք է ամենայն եռանգութիւնների պարզութեամբ արդէն պատրաստի կազմակերպութիւնների վրայ աղդել աշխատէ։ Որ այդ աղդեցութիւնների վրայ աղդել աշխատէ։

թիւնը անփոփոխ չի թողնում նրանց, հասկանալի է ինքն ըստ ինքեան։ Գիտութիւնը կրօնի մէջ էլ այն արուեստը չէ, որ կարող է մուշտակը լուանալ, առանց նրան ջրու տեղու։ Գիտութեան ազդեցութեան տակ մտած կրօնը ուրիշ կդառնայ և պէտք է որ ուրիշ գառնայ։ Այստեղից է յառաջ գալիս նաև կրօնի ու գիտութեան մէջ եղած անխուսափելի ծանր պայքարը, այստեղից է պարզ ու զարգացած կրօնի և երկուսի մի միջնորդի տարբերութիւնը։ Գլխաւոր խնդիրն այն է, որ կոիւը այնպէս վերջացնենք, որ ոչ կրօնի առանձնայատուկ և բնական զորութիւնը ոչնչանայ և ոչ էլ գիտական համաձայնութեան ու կարգաւորութեան, այլ և համբերատարութեան բարիքը մէջտեղից վերանայ։

Ա. ԶԱՆԱԶԱՆ ՓՈՐՁԵՐ ԿՐՕՆԸ ԳԻՏԱԿԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ.

Այդ է պատճառը, որ կրօնը գիտական մշակման ու ազդեցութեան ենթարկելու փորձը այնքան հին է, որքան կուլտուրական աշխարհն ընդհանրապէս։ Ամենահին ժամանակներից սկսած մարդիկ աշխատել են գիտաւորեալ կերպով միացնել միմիանց դէմ ելնող զանազան պաշտամունքներն ու աստուածութիւնները և կապել են կրօնական գաղափարը հնար եղածի և կարողութեան չափ մնացած ծանօթութիւնների հետ։

Ա. Առաջին տեղն է բոնում այստեղ մեր այժմեան պատմական տեղեկութիւնների համաձայն Հնդկաստանի, Բարելնի և Եգիպտոսի քահանաների ստեղծած մտահայեցողութիւնը։ Զանազան անկախ կամ քաղաքական նուաճումների շնորհիւ ի մի գումարած Աստուծոյ պատկերներն ու պաշտամունքները միացւում են և այդպիսով յառաջ է գալիս մի պանթէոն, որի մէջ առանձին առանձին աստուածութիւնները աղդակցական ու ցեղակցական

կապերով կապւում են միմեանց հետ և ներկայանում են իրեւ սերունդ մի նախաստուծոյ։ Աստուածների ծագման վարդապետութիւնը միութիւն է յառաջ բերում, միւնոյն ժամանակ համագրւում են պաշտամունքի առասպելները, զանազան այլաբանական բացատրութիւններ են ստանում և այդպիսով ստեղծւում է մի տեսակ աստուածաբանութիւն, որն ի հարկե միայն քահանաների և գիտունների սեպհականութիւնն է մնում։ Սակայն այստեղից մտահայեցողական, ժողովրդական առասպելը բոլորովին այլաբանորէն բացատրող մի միաստուածութիւն։ Առանձին աստուածութիւնները գառնում են ընդհանրապէս աստուածային էակի երևոյթները, տարբեր անուններ և յայտնութեան կերպեր միւնոյն աստուածութեան։ Ժողովրդական բազմաստուածութիւնը չի վերանում, բայց նրա վրայ ստառնում է քահանայական բացատրութիւնը և մինչեւ անդամ երբեմն փորձ էլ է լինում այդ ուղղութեամբ մի միաստուածական պաշտամունք յառաջ բերել, որ բոլոր աստուածութիւնների նախահիմն ու միութիւնը մի սիմբոլի միջոցով պաշտում է և ուր մի Աստուածը բոլոր միւս աստուածներին իւր մէջ է պարունակում։ Ապա այդ կրօնական գաղափարի հետ միացնում են նաև ժամանակի աշխարհայեացքը, ընդհանուր միութիւն և կապակցութիւն յառաջ բերելու կամ այն հակասութիւններն ու հակառակութիւնները վերացնելու, որ կարող են ելնել այս կողմէ կրօնական գաղափարի դէմ։ Յէոգոնիայից կամաց կամաց անցնում են կոսմոգոնիայի՝ տիեզերքի սկզբնաւորութեան ուսմանը, որը պատկերանում է իրեւ արշիւնք աստուածների գործունէութեան և ապացոյց նոցականութեան իրականութեան բոլոր երևոյթների մէջ։ Յառաջ է գալիս մի առասպելական տիեզերաբանութիւն՝ ուսումն վերին աստուածային և ստորին մարդկային աշխարհների, նրանց բացարձակ ու լիակատար համաձայնութիւնը երար հետ, վերին աշխարհի իրողութիւնների կրկնութիւնը ստորին աշխարհում, աստղաբաշխութիւնն ու ախտեմաւ

տիքական գուշակութիւնը (Mantik): Այն հսկայական ազգեցութիւնը, որ գլխաւորապէս բարելոնական գիտութիւնն է ձեռք բերել այդ տեսակէտից հին աշխարհի վըրայ, այսօր աւելի և աւելի պարզում է: Յոյների մտահայեցողութիւնն էլ նոյն ճանապարհով է ընթանում, միայն այստեղ այն քահանաների ձեռքին չէ, այլ անկախ մտածողների և գրագէտների:

Բ. Կրօնները իրար հետ համաձայնեցնելու մի ուրիշ ձև է սինկրետիսմուս կոչուածը, որ աշխատում է զանազան կրօնների տարբերութիւններն ու հակառակութիւնները համաձայնեցնել ու մի միութիւն ստեղծել: Այս ձեր յառաջ է գալիս ամեն անդամ այնտեղ, ուր վերանում են տարբեր ազգութիւնների մէջ եղած պատնէշները և մի ընդհանուր կուլտուրական միութիւն է առպարէզ գալիս: Այստեղ տարբեր ազգութիւնների զանազան աստուածութիւնները համարւում են միայն տարբեր անուններ միևնոյն աստուածութեան համար: Մեծ ջանք է գործ դրսում մի ազգի աստուածներին մի ուրիշի աստուածների, նրա առասպելների հետ նոյնացնելու համար: Բոլորը ըմբռնում է իրեւ միևնոյն կրօնը, միայն տարբեր լեզուներով և աստուածների տարբեր անուններով: Սինկրետիզմի ամենալաւ օրինակն է հելլենականութիւն կոչուածը և նրա շնորհիւ յունական ու հռովմէական աստուածութիւնների խառնուրդը, որին հետեւց նաև միւս նուաճած ու չնուաճած ազգերի աստուածների նոյնացումը յունա-հռովմէական աստուածների հետ:

Այդ նոյնացմանը բնականաբար պիտի հետեւէր նրանց ընդհանուրի հիմքը գտնելու ձգտումը և ապա անհրաժեշտ պիտի դառնար նաև նրանց կապը պարզել տիեզերական մտահայեցողութեան հետև. Այդբանը տեղի ունեցաւ ամենամեծ չափով ազգերի և կուլտուրաների մեծ խառնուրդի ժամանակ հռովմէական պետութեան մէջ: Դնոստիքականութիւնը մի այդպիսի փորձ է զանազան պաշտամունքներն ու աստուածութիւնները միացնելու և մի ընդհանուր տիեզերական միութիւն ստեղծելու թէոդոնիայի և

կոսմոգոնիայի միջոցով: Առանց որևէ պատմական քննաշդատութեան օգտուում էր նա զանազան առասպելներից և հաւատում նրանց ու ֆանտաստիքական հայեցողութեամբ գործ էր դնում ստոիկեան և պլատոնական փիլիսոփայութիւնը իւր նպատակների համար: Այդպիսով նա մի նախակարապետ էր այն փորձերի, որ ԺԹ. գարում աւելի պարզ պատմական ըմբռնմամբ և խիստ մետափիզիքական մտածողութեամբ Հեգելն ու Շելինգը ձեռարկեցին:

Գ. Այս բոլոր դէպրերում կրօնի գիտութեան առարկան կրօնական կետնքի արդէն պատրաստի երևոյթներն են՝ առասպել, պաշտամունք և այլն: Մտածողութեան առարկան այստեղ կենդանի ներքին կրօնական իրողութիւնը չէ: Վերջինս կատարւում է այն սիստեմների մէջ, որոնք զբաղւում են գլխաւորապէս ներքին աշխարհի երևոյթները գիտելով ու նկարագրելով, կրօնական տրամադրութիւնները վերլուծելով և այդպիսիք յառաջ բերելով: Հնդկական միստիկան այստեղ առաջին տեղն է բռնում, Առասպելը և պաշտամունքը դադարում է կոնկրետ լինելուց և սկսում են առանձնապէս շեշտուել կրօնական տրամադրութեան սկզբնաւորութիւնն ու ազգեցութիւնը, որի բացարձակնուիրումը առ աստուածայինը իւր բոլոր խորութեամբ նկարագրութեան նիւթ է գառնում: Սա կրօնի առաջին հոգեբանական վերլուծութիւնն է, որի մէջ բնականաբար բոլոր թանձրացեալ երևոյթները վերանում են, պատմական կապակցութիւնը ոչնչանում է և կրօնը հանդէս է գալիս իրեւ մի բացարձակ, ամեն տեղ միևնոյն և ժամանակի ազգեցութեան չենթարկուող երևոյթ: Բայց այդպիսի հոգեբանութիւնը մի ամուր հիմք պիտի ունենայ ընդհանուր աշխարհայեցքի մէջ, և այդ պատճառով էլ հանդէս է գալիս մի ծայրայեղ պանթէիստական բնազանցական աշխարհայեցք: Միայն աստուածայինն է իրականը. կրօնական անձնուիրութեամբ ոչնչանում է ժամանակաւոր և զգայական աշխարհի երևոյթը, Մի նոյնպիսի զարգացումն սկսում է նաև բնական միստիկայի չնորս



հիւ, որ իւր կատարելագործութիւնն է գաճում՝ Պլատոնի փիլիսոփայութեան և նոր պլատոնականութեան մէջ:

Դ. Մի այլ տեսութիւնն է կրօնի մասին իլլուզիոնիատականը, որ նոյնպէս հօգեբանական վերլուծութեամբ է զբաղւում, բայց որի նախադրեալները բոլորովին տարբեր են. կրօնը այստեղ չէ նկատում իրեւ մի իրական ճշշմարտութիւն: Այս տեսութիւնը յառաջ է եկել շնորհիւ յունական քաղաքակրթութեան մէջ զարգացած մեխանիստական բնագանցութեան, որի մէջ տեղ չունի ամենին աստուածների մասին եղած ուսմունքը: Այստեղ վերլուծութեան առարկան միստիքական դրութիւններն ու զգացումները չեն, այլ կրօնական աշխարհայեացքը, գործնական պաշտամոնքը և երկիւղի ու յուսոյ գրգիւռները: Կրօնը հանդէս է գալիս այստեղ իրեւ արդիւնք ոչ գիտական երեակայութեան, երկիւղի և յուսոյ, իրեւ մի քաղաքական տեսակէտից նպատակայարմար ստեղծագործութիւն ու չենք: Կրօնական տեսութիւնների արդիւնքը պիտի լինի ազատել մարդկանց զգայական կեանքից, անհանգստութիւններից ու հակասութիւններից: Առաջին անգամ մեծ ուժով ասպարէզ եկաւ այս տեսութիւնը Եպիկուրի դպրոցի մէջ և Եւհեմերոսի անուամբ, որը բացատրեց կրօնական առասպելները, Եւհեմերականութիւն կոչուեցաւ: Այս տեսութիւնը կրկին հանդէս եկաւ վերածնութեան շրջանում և առանձնապէս զարգացաւներկայիս մատերիալիստական և պողիտիստական փիլիսոփայութեան մէջ:

Ե. Մեծ տեսութիւններից վերջինը սուպրանատուրալիզմինն է կամ յայտնութեան վարդապետութեանը: Հիմնական կերպով զարգացել է այն հրէութեան մէջ և աւելի յառաջ գնացել շնորհիւ քրիստոնէութեան և իսւլամի: Ինչ չափով նոյն բանը կարելի է պարսկական կրօնի կամ բուդդայականութեան մէջ գտնել, դժուար է ասել: Յամենայն դէպս հրէութեան մէջ մի բոլորովին առանձնայատուկ զարգացումն է ունեցել այն: Խորայէլի կրօնը միակ ժողովրդական, մտահայեցողութիւնից առաջ չեկած

միաստուածութիւնն է: Նա մի բարոյական միաստուածութիւն է, որի վերջին հիմքը աստուածային բարոյական կամքի միութիւնն ու անկախութիւնն է, որը բոլորովին հակաբազմաստուածեան մի կրօնական ժողովրդական ոյժ է: Այդ պատճառով էլ նրա ճշմարտութիւնները համարւում են ընդհանուրի համար պարտաւորական, նա մի աստուածային յայտնութիւն է, որի մօտ բոլոր միւս յայտնութիւնները ստութիւն ու կեղծիք են դառնում: Սուրբ գիրքը, որի մէջ նկարագրուած է այդ աստուածային կամքը, դառնում է միակ ճշմարիտ և միակ սուրբ աղբիւրը ճանաչողութեան: իսկ ընտրեալ խորայէլացւոց ազգի պատմութիւնը մի բոլորովին առանձնայատուկ յայտնութիւնների ու հրաշքների պատմութիւն, որի մօտ բոլոր միւս աղբերի հրաշքները առասպել կամ դիւական անոտիք են: Յառաջ է գալիս մի ամեն ինչ բովանդակող պատմութեան փիլիսոփայութիւն: Աստուծոյ կամքը տիեզերքի նկատմամբ իւր սուրբ բարոյական պատուիրանի կատարումն է: մարդկութեան ամենամեծ մասը մոլորուել է, միայն Խորայէլի ժողովուրդն է մնացել, որին վիճակուած է իւր ընտրութեան շնորհիւ ճշմարտութիւնը պահպանել և առաջնորդ դառնալ մոլորուած մարդկութեանը զզջման ու դարձի բերելու համար:

Այս տեսութիւնը յետագայում մեծ զարկ ստացաւ շնորհիւ քրիստոնեանների գիտական աստուածաբանութեան և կապուեց հին աշխարհի ամերկերաբանութեան և կրօնական փիլիսոփայութեան հետ: Յայտնութիւնը աւելի է քան միայն յայտնութիւն, նա աշխարհի սկզբից գործող և Քրիստոսի մէջ կատարելութիւն գտած փրկութեան նախապատրաստութիւնն է: իսկ փրկութիւնը Աստուծոյ լիակատար ճանաչողութիւնն է, Աստուծոյ հետ միացում, բացարձակ վստահութիւն յակիտենական եղջանկութեան վրայ, ոչնչացումն և թողութիւն մեղքերի: Այս փրկութեան վարդապետութիւնը ապա միանում է յունական վերջին շրջանի փիլիսոփայութեան հետ: Հոգին բղխում է աստուածութիւնից և ընկնում մեղքի մէջ և այդպիսով

մնում է իւր բնական զօրութեան ու բանականութեան յուսով. նա ձգտում է նորից դէպի աստուածութիւնը և այդ փրկութեան ճանապարհի վրայ նախապատրաստող դեր են կատարում նախահայրերն ու Խորայէլի մէջ եղած յայտնութիւնը, մինչև որ աստուածային ամբողջ բանականութիւնը Քրիստոնի մարդեղութեամբ յայտնագործում է և եկեղեցու ու նրա խորհուրդների հիմնագրութեամբ առիթ ու պատճառ է դառնում մարդկանց աստուածացնելու Կրօնի գիտութեան այս տեսութեան հիմնական գաղափարները հետեւեալներն են. մարդկութիւնը բաժանում է երկու մասի՝ ժառանգական մեղքի մէջ մնացած և փրկուած. հեթանոսական գիտութեան մէջ էլ պէտք է ընդունել մասնակի յայտնութիւն. կատարեալ յայտնութիւնը երեացել է Աստուածամարդու մէջ. եկեղեցին մի կազմակերպուած օրդան է՝ բանականութիւնը իւր կատարելութեանն հասցնելու և մարդկութիւնը փրկելու համար:

Այս գաղափարների միջոցով քրիստոնէութիւնը այնպիսի հսկայական ազգեցութիւն ձեռք բերեց համաշխարհային պատմութեան մէջ, որ մինչև այսօր էլ զգալի է. Բայց կրօնական կենդրոնական ճշմարտութիւնների խոկական վճռական ապացոյցները ի հարկէ մնում էին փրկութեան պատմութեան հրաշքները, որոնց միջոցով միայն կարելի էր ճանաչել Աստուածոյ անմիջական յայտնութիւնը և գործունէութիւնը. մնացած բոլորը մարդկային արտագրութիւն է, ուրեմն ամենայաջող դէպումը միջնորդական կերպով աստուածային, մեղքի շնորհիւ մթագնած ճանաչողութիւն:

III. ՆՈՐԱԳՈՅՑ ԳԼԽԱԽՈՐ ՍԻՍՏԵՄՆԵՐԸ.

Այս բոլոր գիտական նախագրեալների և միջոցների հանդէպ ներկայ աշխարհը նորագոյն բնական գիտութիւն-

ների և քննական պատմագիտութեան միջոցով ստեղծել է մի նոր հիմունք գիտական մտածողութեան համար, որը թէև հին գիտութեան հետ շատ կողմերից կապուած է, բայց էլի բոլորովին նոր հիմնաւորումն է յառաջ բերել ոչ միայն փիլիսոփայութեան համար ընդհանրապէս, այլ նաև կրօնի գիտութեան համար: Այդ պատճառով էլ կարեսը է, և կրօնի գիտութեան հասկացողութեան ու զարդացման համար անհրաժեշտ է, բնորոշել այն Ժէ. դարսոց մկան հանդէս եկած գլխաւոր սիստեմները, որոնք հիմնուած են նոր աշխարհայեացքի վրայ: Ամենից առաջ յիշելի են այստեղ մեծ մետաֆիզիկ փիլիսոփաների Աստուածուածոյ գաղափարը նոր ի նորոյ հիմնաւորելու և կազմակերպելու փորձերը, որոնց մէջ այդ Աստուածոյ գաղափարը փոքր ի շատէ նոյնանում է քրիստոնէական յայտնութեան հետ, մանաւանդ վերջնիս ուղիղ ըմբռնելու դէպքում (Դեկարտ, Սպինոզա, Մալբրանշ, Լայբնից): Ապա այն ձգտումը, որ աշխատում էր բազմատեսակ գաւանութիւնների միջից հոգեբանական վերլուծութեան շնորհիւ ամեն կրօնի համար ընդհաննուր ճշմարտութեան ուղին ու ծուծը գտնել և որը աշխատում էր համաձայնութեան մէջ մնալ բնական գիտութիւնների հետ յարմարեցրած բնազանցութեան (Metaphysik) հետ. մեծ դեր է կատարում այստեղ բարոյական գիտակցութիւնը և քրիստոնէութիւնը գառնում է այս բնական ճշմարտութեան համար մի տեսակ աստուածային ներածութիւն կամ նախապատրաստութիւն. (Դեկարտ) և նրա փիլիսոփայական գլխաւոր առաջնորդը՝ Զոն Լոկը: Վերջապէս ուշագրութիւն է դարձնելում նորից կրօնի միստիքական տրամադրութիւնների վրայ. կրօնի միջոցով է ըմբռնում Աստուածոյ և աշխարհի միութեան զգացմունքն ու փորձը, բոլոր կրօնների մէջ հիմնական ճշմարտութիւնները միևնույնն են և մի միստիքական քրիստոնէութեան մէջ ամեն ու բոլոր կրօնների էութիւնը ճանաչւումէ, Այդպէս է բարդիկալ պիետիզմը և վերածնուած նոր պլատոնական միստիկան, այլ և Ռուսոսի ուսմունքը պարզ, բնական կրօնական զգացմունքի մասին: Պակաս չէ

նաև կրօնի բացարձակ մերժման ուսմունքը. — բնութեան մէջ տեղ չի մնում վերացականի համար և պատմական համեմատական քննութիւնը խախտում է բոլոր կրօնների հաստատութիւնը: (Դաւիդ Հիւմը և նրանից էլ այն կողմնանցող ֆրանսիական Բագիկալիզմը):

Բայց այս բոլորը գեռ ևս նոր ըմբռնողութեան միայն առաջին շարժումներն են: Նորագոյն կրօնի գիտութեան գլխաւոր սիստեմները այս շարժումների շնորհիւ և աղղուցութեամբ յառաջ բերեց ԺԹ. դարը: Չորս այդպիսի գլխաւոր և մեծ սիստեմներ կան:

Ա. Առաջին տեղն է բռնում քննական Իդէալիզմը: Այս իդէալիզմը այն բոլոր մետաֆիզիքական տեսութիւնների վախճանական արդիւնքն է, որոնք ձգտում էին նոր մատեմատիք — մեխանիստական բնափիլիսոփայութիւնը միացնել մի իդէալիստական վախճանաբանական աշխարհայեցքի հետ: Համոզուելով լիապէս, որ բոլոր այդպիսի փորձերը ապարդիւն են, նա բոլորովին մերժում է ամեն մետաֆիզիկա և կենդրոնանում է մարդկային սուբյեկտիւրանականութեան վերլուծութեան վրայ, այդ բանականութեան մէջ է տեսնում միակ իրականը և ամեն իրականութիւն, որը սակայն հանդէս կարող է գալ միայն այդ բանականութեան հիմնական տուեալներից: Բայց վերլուծութիւնն այստեղ գլխաւորապէս հոգեբանական չէ, որ գիտակցութեան բովանդակութիւնը անդամահատում է և հետազոտում նրա ծագման հոգեբանական եղանակը, այլ իմացարանական (erkenntnistheoretisch), որը հոգեբանական իրական բովանդակութիւնից հանում է մեր ճանաչողութեան ինքնորոշիչ (autonom) պարտագիր օրէնքները: Միայն այդ օրէնքների շնորհիւ հնարաւոր է մարդկային բանականութեան համար ճանաչողութիւնը կամ իմացութիւնը: Այդ օրէնքների մէջ իւր տեղն ունի բնագիտական, բարոյագիտական, էստետիկական — վախճանաբանական մտածողութեան օրէնքների կողքին նաև կրօնական գաղափարների կազմութեան օրէնքը: Ըստ կանոնի և նրա անմիջական հետեւողների, կրօնական գաղափարների կազմու-

թեան օրէնքը սերտ կապ ունի բարոյական գաղափարների կազմութեան օրէնքի հետ: Կրօնը գործ ունի իրերի հիմքի հետ և այսաեղ ոչ թէ անհատների գիտակցութիւնն է արտայայտութիւն գտնում, այլ ընդհակառակը ընդհանրապէս գիտակցութեան ներքին անհրաժեշտութիւնը, ուրեմն անհատականից գերադաս, ընդհանուրի համար պարտադիր նշանակութիւն ունեցող բանականութեան անհրաժեշտութիւնը: Այսպիսով «զուտ բանականութիւն» գաղափարով բարձրանում ենք դարձեալ գէպի մետաֆիզիկական — կրօնականի սահմանը, բայց առանց մետաֆիզիզմական հիմնական գաղափարից հանել փորձելու մեր իրական գիտակցութիւնն ու նրա բովանդակութիւնները: Այդպիսով կանոնի կրօնի տեսութիւնը կախումն ունի կրօնի գէիտական բարոյագիտական վերլուծութիւնից: այն ինչ Ելայերմախերի նոյն նախագրեալների հիման վրայ փորձում է կրօնի մի իմացարանական (erkenntnistheoretisch) վերլուծութիւն, որն աշխատում է կրօնի առանձնայտակութիւնները բոլորովին անկախ բարոյական օրէնքներից ըմբռնելք: Ելայերմախերի կարծիքով կրօնական գաղափարների համար իրակ հիմնական օրէնքը պէտք է ընդունել վախճանականի և անվախճանականի միութեան զդացմունքը: Ելայերմախերի տեսութիւնը կապ ունի այդ տեսակէտից կրօնի միտիքական և պիետիտական վերլուծութեան հետ: Կրօնի այդ ապահովին գանելուց յետոյ միայն կարելի է հետեւել գանելու նրա հոգեբանական և պատմական իրականութեան ճանապարհը: մի նպատակ, որի վրայ կանուգ մեծ ուշագրութիւն չդարձեց և լուծեց խնդիրը շատ ընդհանուր գծերով, այն ինչ Ելայերմախերը աւելի սկզբունքով և աւելի մեծ յաջողութեամբ լուծեց այն երրորդ նպատակն է գանունում անհրաժեշտաբար՝ կրօնի պատմական հոգեբանական զարգացումը քննադատական կերպով գնահատել, որի ժամանակ չափը ընականորէն հետեւեալն է: այն կրօնն է ամենաբարձրը, որի մէջ կրօնի ապրիորին ամենամաքուր կերպով է հանդէս գալիս կանակի և Ելայերմախերի համոզմամբ ամենաբարձր կրօնը

այդպէս գատելով քրիստոնէութիւնն է, բայց նոքա քրիստոնէական գաղափարը և հարկէ քննական կերպով մշակում էին և նրա միջից հանում այն գլխաւոր գծերը, որոնք նշանակութիւն ունին ներկայ ժամանակի գիտակցութեան համար:

Բ. Երկրորդ մեծ խումբը հետեւում է Հեգելի վարդապետութեանը. այդ վարդապետութեան էութիւնն այն է, որ այստեղ կանտի փիլիսոփայութեան մէջ եղած՝ դիտակցութեան վերլուծութեան վերջին սահմանագաղափարը, «զուտ բանականութիւնը»՝ դործադրում է գարձեալ բնազանցական տեսակէտով և այդ «զուտ բանականութիւն»-ից արտածւումէ բնական և հոգեկան պատմութեան իրականութիւնը իրեւ բանականութեան անհրաժեշտ տրամաբանական հետեւանք։ Այդ բանն անել կարողանալու համար Հեգելը աւելացնումէ զուտ բանականութեան վրայ մի ուրիշ երեսոյթ՝ շարժումն հակադրութեան միջոցով, հակադրութիւնը մի աւելի բարձր աստիճանի վրայ հաշտեցնելու համար։ Այդպիսով բանականութիւնը մի յարաշարժութիւն է ստանում և յառաջ է դալիս բանականութեան զարդացման սկզբունքը։ Իրականութիւնն ուրեմն ամեն անդամ և միշտ անհրաժեշտ բանականութիւնն է կամ իդէան՝ զարդացման մի որոշ աստիճանում և մարդկային հոգին է, որ ներկայացնում է բանականութեան մեզ ծանօթ զարդացման աստիճանը, որը կարող է իրեն վերաբերող և իրենից առաջացող ամբողջ զարդացումը վերլուծել և վերանորոգել։ Կրօնը մարդկային բանականութեան ապրիորիական մասերից մէկն է և կարող է ոչ միայն ապացուցանել իւր զուտ բանականութիւնից յառաջ գալու անհրաժեշտութիւնը, այլ կարող է վերլուծել ինքն իրեն՝ իւր զարդացման շրջանները, իբրև տրամաբանական անհրաժեշտութիւն։ Կրօնը տիեզերքի միութեան միստիկական հաւատն է և այդ պատճառով էլ կարելի է հասկանալ այն իբրև ինքն իրեն իւր կենդրունում ըմբռնող բանականութիւնը նաև կամաձայն է առաջարկութեան միացումը, որոնք զարդացման ընթացքում բաժանուել էին միմեանցից։ Այդ պատճառով էլ քրիստոնէութեան աստուծամարդութեան վարդապետութիւնը ինկատի է առնւում այստեղ իբրև կրօնի և բանականութեան զարդացման վերջնական նպատակ, թէեւ եկեղեցական քրիստոսաբանութիւնը բացատրում է վերը լի տեսութեան համաձայն։ Սակայն շատ շուտով Հեգելի աշակերտներից ոմանք այս վարդապետութիւնից հետեւաթիւններ հանեցին և ստեղծեցին մի բագիկալ յառաջադիմականութիւն, որի համաձայն քրիստոնէութիւնը արգէն թառամող, թէիստական—անթրոպոմորֆական գաղա-

է անվախճան տիեզերական բանականութիւնից։ Կրօնը ուրեմն միջոց է տալիս եղած վախճանական աշխարհի միութիւնը կրկին ձեռք բերելու նրան յառաջացնող անվախճանի հետ՝ մարդկային գիտակցութեան մէջ։ Բայց կրօնը տիեզերական բանականութեան միտքը ըմբռնումէ մութ զգացողութեամբ և պատկերացնում է այն հայեցողական պատկերներով և սիմբոլներով։ կարեռով է կրօնի փիլիսոփայութիւնը այդ պատճառով, որ նրա բովանդակութիւնը գաղափարական իմացութեան վերածէ։ Սակայն կրօնի հանրազդեցիկ ուժի համար անհրաժեշտ են իւր պատկերներն ու սիմբոլները և միայն փիլիսոփայական կրօնի մէջ են նոքա գաղափարներ դառնում։ Իսկ ժողովորդի կրօնին պէտք է անշուշտ փիլիսոփայական ըմբռնուզութեան համաձայն ուղղութիւն տալ և հեռու պահել մոլեւանդական և սնոտիապաշտական զարտուղի ճանապարհներից։

Հեգելի այս ուսմունքը հսկայական յաջողութիւն ունեցաւ, գոնէ սկզբում աւելի մեծ յաջողութիւն, քան թէ կանտինը կամ Նլայերմախերինը։ Նրա պատճառն այն էր, որ նա աւելի մօտ էր կրօնի մետափիզիկական ձգտութեամբներին և կրօնի զարդացման պատմութեան համար էլ մի ամուր ներքին անհրաժեշտութիւն էր ասպարէդ հանում։ Նրա համար ամենազլիսաւոր նպատակը բանականութեան լիակատար ինքնաճանաշութիւնն է, մարդկային ու աստուծային բանականութեան միացումը, որոնք զարդացման ընթացքում բաժանուել էին միմեանցից։ Այդ պատճառով էլ քրիստոնէութեան աստուծամարդութեան վարդապետութիւնը ինկատի է առնւում այստեղ իբրև կրօնի և բանականութեան զարդացման վերջնական նպատակ, թէեւ եկեղեցական քրիստոսաբանութիւնը բացատրում է վերը լի տեսութեան համաձայն։ Սակայն շատ շուտով Հեգելի աշակերտներից ոմանք այս վարդապետութիւնից հետեւաթիւններ հանեցին և ստեղծեցին մի բագիկալ յառաջադիմականութիւն, որի համաձայն քրիստոնէութիւնը արգէն թառամող, թէիստական—անթրոպոմորֆական գաղա-

փարների հետ շաղկապուած կրօնական զարգացման մի շրջան է, որից յետոյ դալու է իրակ ապագայի կրօն էստիտիբական համաստուածութիւնը:

Գ. Առաջին երկու տեսակին բոլորովին հակառակ դիրք է բռնում երրորդ գլխաւոր տեսակը՝ պողիտիւիզմի կրօնական փիլիսոփայութիւնը Կոնտի գորոցից: Առաջին երկու տեսութիւնները, չնայելով նրանց բոլոր տարբերութիւններին, հիմնուած էին իդէալիստական ըմբռնման վրայ և իրականութեան հիմքը փնտրում էին զգայական աշխարհից դուրս և ընդունում էին միևնույն ժամանակ բանականութեան իդէալական ինքորոշ արժէքներ: Այդ պատճառով երկու տեսութիւններն էլ դրական վերաբերմունք էին ցոյց տալիս դէպի կրօնը: Դրա հակառակ՝ պողիտիւիզմը հիմնուած է այն հակադիր նախադրեալի վրայ, թէ միակ իրական ու հաստատուն մտածողութեան առարկան, գիտութեան իսկական էտիմունը, զգայական իրականութեան օրինական կամ գոնէ կանոնաւոր կապակցութիւնն է. իսկ վերացական աշխարհի համար մնալ կարող է միայն այն, ինչ որ չի հասկասում դրան:

Սրանով պարզում է, որ դրական փիլիսոփայութեան կամ պողիտիւիզմի հիմքը ԺԷ. Պարու ֆրանսիական մատերիալիզմն է. և թէ նա վերջինիս թոյլ կողմերից խուսափելու համար մերժումէ ամեն մետափիզիկա, չի ընդունում մինչև անդամ ընութեան օրէնքների մետափիզիկա, ըստ նրա սկզբունքը որոշ օրէնքներով սահմանափակուած փորձն է և այդ պատճառով էլ նրա դիրքը շատ էլ ուրիշ չէ, քան թէ մատերիալիզմին էր: Բնութեան դօգմատիքական օրէնքների տեղը բռնում են կանոնաւոր, փորձի ենթակայ կապակցութիւնները և հոգեոր իրականութեան տարբերութիւնը մարմարական աշխարհից ընդունում է: Բայց գիտական ճանաչողութեան համար միակ հաստատունը մնում են ընութեան իրողութիւնների նկատուած և համագրուած կանոնաւոր, փորձի ենթակայ կապակցութիւնները և հոգեոր իրականութեան տարբերութիւնը մարմարական աշխարհից ընդունում է:

այդ ճանաչուած կանոնաւորութիւնները կեանքի և դույթեան պահպանման օգտին ծառայեցնելու:

Այստեղ կրօնը իրակ ճշմարտութիւն այլ ևս տեղ չունի. նա պէտք է բնականորէն երևակայութիւն, իլլիւդիա դառնայ, իսկ այն մեծ գերը, որ կատարել է կրօնը, պէտք է ուրիշ հիմք ունենայ, քան այն, ինչ որ կրօնն ինքն է կարծում: նա պիտի լինի ինքն իրեն համար գեռ ևս անդիտական մի կարևոր գործունէութիւն: Այդ գործունէութիւնը տիեզերքի նախագիտական բացատրութեան և նախագիտական ընկերական բարոյագիտութեան (Sozialethik) գործունէութիւնն է: Այդ նախագրեալների պատճառով բոլոր շեշտն ընկնումէ նախապատճառական և նախնական գրութեան մէջ մնացած ազգերի և կրօնների վրայ: Այդիսով Հեզելի գորոցի կրօնական առասպեկտների բացատրութեանն ու կրօնների պատմութեանը հանդէպ է ենում և լուացնում է մի ազգագրական մարդաբանական հետազոտութիւն, որ նկարագրում է զանազան ազգերի և զանազան քաղաքացի կրթութիւնների մէջ զարդացած կրօնները և ցոյց է տալիս, թէ ինչպէս կրօնը այդ ուղղութեամբ յառաջադիմելով՝ իւր վախճանն է գտնում գրական գիտութեան կրօնագորոկ ընկերական վարդապետութեան մէջ: Զպէտք է ուրանալ սակայն, որ այս ուղղութեան շնորհիւ բաւական չափով յառաջադիմել է թէ նախնական ազգերի կրօնների և թէ առհասարակ հին կուլտուրական ժողովուրդների կրօնների ուսումնասիրութիւնը: Այդպիսով հնարաւոր է գարձել առասպելական նիւթերը աւելի լաւ ըմբռնել ու պարզել. բայց բարձրագոյն հոգեօր և բարոյական կրօնների ըմբռնման համար համարեալ թէ ոչինչ չկարողացաւ տալ պողիտիւտական ուղղութիւնը:

Դ. Վերջապէս մնում է յիշել եկեղեցական գործադրական յայտնութեան վարդապետութիւնը, որը նոյնպէս ներկայ գիտութեան յառաջ բերած փոփոխութիւններին ենթակայ լինելով վերակազմուել է, և որը ազգեցութիւնը ունենալով աստուածաբանական և եկեղե-

ցական շրջանների վերայ, այսօր էլ դեռ ամենատարածուած կրօնական գիտութիւնն է։ Ընդհանուր առմամբ Եկեղեցու մէջ ազդեցութիւն ունեցող աստուածաբանութիւնը նորագոյն ժամանակներում բոլորովին հեռու է քաշուել կրօնի գիտութիւնից և բաւականանումէ քրիստոնէական իդէան նկարագրելով իբրև յայտնագործուած ճշմարտութիւն, միանգամայն մէկդի թողնելով ոչ քրիստոնէական կրօնները Բայց նորագոյն գիտութեան ազդեցութիւնը նրա վրայ էլ երեսում է այդ յայտնագործուած ճշմարտութեան ապացուցութեան և հիմնաւորման մէջ։ Յայտնութեան գաղափարը ապացուցւում է ոչ թէ հրաշք ների կամ Ա. Գրքի ներշնչման վարդապետութեան միջոցով, այլ քրիստոնէական կրօնական տրամադրութեան հոգեբանական վերլուծութեամբ. այժմ այդ ներքին տրամադրութիւնն է հրաշքի տեղ ծառայում, այլ և այդ հրաշքը յառաջացնող Փրկութեան միջնորդները՝ Եկեղեցին, Ա. Գիրքը և Փրկութեան պատմութիւնը, ամենից աւելի՝ ամեն իւր անձի մէջ պարունակող Քրիստոսի անձնաւորութիւնը։ Բայց այդ ներքին հրաշքի մէջ գործող և իբրև աստուածային վկայուած՝ յատնութեան ճշմարտութիւնն էլ այժմ հեղինակաւոր գոգմա չէ, այլ մի միացեալ, մեղքի թողութեան վարդապետութեան շուրջը համախմբուած, առանձնայատուկ կրօնական բարոյական գաղափար, Ոչ քրիստոնէական կրօնների նմանութիւններն ու ճշմարտութեան նշոյները ըմբռնուում են իբրև նախամարդոց մէջ գործող բնական բանականութեան ազդեցութեան հետևանք և գնահատում են իբրև աստուածային նախապատրաստական շնորհ։ Բոլոր այս գաղափարների կազմութեան գլխաւոր հիմքն այն է, թէ ամեն իրական, զօրեղ կրօն յառաջ գալ կարող է մի որոշ գրական յայտնութեան հաւատից և միայն այդպիսի հաւատի մէջ կայ ընկերութիւն կազմող զօրութիւն։ Բացի այդ առանձնապէս շեշտումէ որոշ նախագրեալներից ազատ լինելու անկարելիութիւնը։ Կրօնի գիտութեան նպատակը կարող է լինել այդ պատճառով միայն որոշել քրիստոնէական յայտնութեան գաղափարը,

իբրև ժառանգական մեղքը մի ներքին հրաշքով ոչնչացնող և միակ յայտնութիւն. իսկ այդ յայտնութեան բուվանդակութեան բացատրութիւնը նա պիտի թողնի քրիստոնէական աստուածաբանութեանը։

Ով աւելի առաջ է գնում, աստուածաբանութեան համար ընդհանուր կրօնների գիտութիւնը իբրև շրջանակ ծառայեցնելու գործում, նրա համար Շելլինդի յետին շրջանի վարդապետութիւնը կարող էր միջոցներ և կարեւոր մաքեր ընձեռել։ Աշխարհը երկպառակութեան մէջ է և ընդդիմութիւն է Աստուծոյ, ինչպէս այդ բանը ուղղիդ կերպով զգացուած է և նկարագրուած նախահայրերի անկման պատմութեան մէջ։ Բայց այդ բանականութեան ընդդիմադիր և արարածական դարձող կամքի դէմ գործում է աստուածային բանականութիւնը՝ աստիճանաբար զարգացող յատնութեան միջոցով։ Ոչ քրիստոնէական կրօնները բանականութեան նախապատրաստական երեսյթներն են, իսկ իսրայէլական և քրիստոնէական կրօնը ընդհակառակն նորալիակատար յայտնութիւնը, իսկ գրանով հաշտութիւնն ու փրկութիւնը, որ այսուղ Շելլինդի փիլիսոփայութեան մէջ աւելի հաստատուն կերպով մետաֆիզիքական հիմունքների վրայ է դրւում, քան թէ էր այն Հեղեղի փիլիսոփայութեան մէջ։ Կրօնական զարգացումը այսուղ այլ ևս չի նոյնանում հոգեսոր զարգացման հետ ընդհանրապէս, այլ ունի իւր առանձնայատուկ տեղը նրա մէջ և յառաջ է գալիս միշտ յայտնութեան ընձեռած հիմունքների շնորհիւ։

IV. ԿՐՕՆԻ ԷՌԻԹԻՒՆԸ.

Այս գլխաւոր տեսութիւնների միմեանց դէմ ունեցած հակառակութիւնները ցոյց են տալիս, որ չի կարելի խօսել մի ընդհանուրի համար ընդունելի կրօնի գիտութեան մասին։ Նախապաշտումներից ազատ գիտնականը

կարող է անշուշտ այս բոլոր տեսութիւններից էլ շատ բան սովորել, բայց նոցա բոլորին էլ ո՞չ և է ձեռվ իրաւունք տալ և մի կոմպրոմիս առաջ քերելը կինէր ամենախառնիւ խուռն և երկու էկլեկտիցիզմը։ Դիտնականը այստեղ քաջութիւն պէտք է ունենայ ընտրութիւն անել զանազանակերպ տեսութիւնների մէջ, առանց քաջուելու միւս վարդապետութիւնների խիստ հակածառութիւններից կամ անկրօն ու անդիտնական լինելու յանդիմանութիւններից։ Այս համառօտ տեսութիւնը հետեւմ է զլիսաւորապէս կանո—Շլայերմախերեան մեթոդին, աշխատելով նաև այդ ստհմանում միւս տեսութիւնների մէջ ճշմարտութեան գծեր գտնել ու միացնել իւր ընդունածի հետ։

Սովորական է դարձել կրօնի նորագոյն գիտութիւնը համարել մի հետազոտութիւն կրօնի էութեան մասին։ Եթէ այդ արտայայտութեամբ ուղում են ասել, թէ կրօնը քննութեան առարկայ է դառնում իբրև մարդկային գիտակցութեան մի երեսյթ և ոչ թէ Ստաուծոյ դաշտափարի և կրօնական օբյեկտների մետաֆիզիքական ապացուցութիւն, այն ժամանակ արտայայտութիւնը ճիշտ է։ Բայց ընդհանրապէս վերցրած «կրօնի էութիւնը» արտայայտութիւնը մոլորեցուցիչ է իւր բազմազան նշանակութիւնների պատճառով։ Սխալ կինի կարծել, թէ միայն մի հետազոտութեամբ հնարաւոր է կրօնի էութեան մէջ պարունակուող բոլոր հարցերի պատասխանը տալ։ Կրօնի էութիւն ասելով կարելի է հասկանալ ամենից առաջ այն բոլոր էական ու բնորոշ առանձնայատկութիւնները, որոնց շնորհիւ կրօնական երեսյթները հոգեբանօրէն ճանաչում են իբրև հոգեկան երեսյթներ։ ուրեմն մի ընդհանուր և սեռի գաղափար (Gattungsbegriff), որը նկարագրում է հոգեբանական երեսյթի ընդհանուր և առանձնապէս բնորոշ առանձնայատկութիւնները։ Բայց նա նշանակում է նաև իսկական էութիւնը՝ հակառակ լոկ երեսյթի, կամ ուրեմն կրօնի բովանդակած ճշմարտութիւնները։ Իսկ այս վերջինը հնարաւոր չէ գտնել հոգեբանական հետազոտութեան շնորհիւ, այլ կարելի է միայն իմացարանական քննութեամբ։ Բայց իմա-

ցաբանական քննութեան արդիւնքն էլ վերաբերել կարող է միայն կրօնի ընդհանուր երեսյթին։ ոյն ընդհանուր բովանդակութեանը, որ պատմական բոլոր զարդացումների մէջ էլ միենոյնն է։ Սակայն ինչպէս որ կրօնի հոգեբանութիւնը ստիպուած էր ճանաչել բազմագան պատմական տարբերութիւններ կրօնական կազմութիւնների մէջ, այնպէս էլ «կրօնի բովանդակած ճշմարտութիւնների» գաղափարը պիտի ի նկատի առնի այդ զանազան զարդացման ենթակայ կրօնական կազմութիւնները։ նա կդառնայ այդպիսով կրօնների պատմական զարդացումների մի առիճանական կարգաւորումն, համաձայն նրանց արժէքի, և այդպիսով մէջ տեղ կգայ կրօնի իդէալը կամ ապագայի կրօնի գաղափարը։

Կրօնի էութեան գաղափարը այդպիսով կտանի մեզ գէպի մի պատմափիլիսոփայական հետազոտութիւն, որ չեկարող կանգնած մնալ բոլոր կրօնների մէջ եղած ընդհանուր ճշմարտութեան վրայ, այլ պէտք է հետևի այդ ճշմարտութեան զարդացմանը ամբողջ պատմութեան ընթացքում։ Վերջապէս «էութեան» հարցին է վերաբերում և այն խնդիրը, թէ ինչ միտք և նշանակութիւն ունի կրօնը ընդհանրապէս մեր կեանքի համար։ իսկ այդ հարցին անհնար է միայն կրօնով իրենով պատասխանել, այլ պէտք է ի նկատի ունենալ նաև շրջապատն ու նման կամ կապ ունեցող միւս երեսյթները։ Ուրեմն ամեն անդամ երբ գրւում է կրօնի էութեան հարցը, մէջ տեղ է գալիս նաև կրօնի յարաբերութեան խնդիրը տիեզերքի մասին ունեցած մեր միւս իմացութիւնների և աշխարհայեացքի հետ։ Այդ է պատճառը, որ անհրաժեշտ է դառնում պարզել կրօնի իրողութիւնների գիրքը գէպի մեր ամբողջ աշխարհայեացքն ու արտաքին աշխարհի մասին ունեցած ծանօթութիւնը։ մի խօսքով հանդէս է գալիս Ստաուծոյ գաղափարի գիրքը վիլիսոփայութեան նկատմամբ։ Այնպէս որ ինչքան էլ կրօնի նորագոյն գիտութիւնն աշխատել է կրօնը ըմբռնել հէնց կրօնի միջոցով, քննելով կրօնական երեսյթները և նրանցից տեղեկութիւններ ժո-

զովելով իրեն մասին, այնուամենայնիւ այդ գեռ միայն առաջին քայլն է և բոլոր հին փորձերը՝ կրօնի փիլիսոփա յութիւն ստեղծելու, կրօնական գաղափարների հիմնաւորումն ու տեղը գտնելու մեր ամբողջ աշխարհայեացքի մէջ, վերջ ի վերջոյ իրենց իրաւունքի մէջ կմնան արդարացի կերպով:

Այդ տեսակէտից բոլորովին սխալ է և հնացած մի ձև կրօնի էութիւնը որոշել զանազան «ուահմանու մնաերով», այն համոզմամբ, թէ այդպիսի «ուահմանն»երի մէջ արտայայտել կարելի է բոլոր հարցերը, որոնք պատասխանի են սպասում։ Նոյնպիսի մի սխալ «ուահման» է նուև «կրօնի սկզբնաւորութիւնը» գաղափարը, որը յաճախ և ոիրով նոյնացնում են «կրօնի էութեան» գաղափարի հետ։ Ի՞նչ է նշանակում այստեղ «սկզբնաւորութիւն»։ Եթէ վերցնելու լինենք այն իւր իսկական իմաստով և սկզբանաւորութեան հիմքն ու պատճառը հարցնենք, այն ժամանակ կարող է նշանակել այն միայն կրօնի սկզբնաւորութիւնը իւրաքանչիւր առանձին մեղ ծանօթ արդի կամ նախկին կրօնական անհատի մէջ։ Սակայն մի բոլորովին նոր սկզբնաւորութիւն այստեղ մենք երբէք չենք կարող ունենալ մեր առաջ։ Անհատական կրօնը ծագում է միշտ կրօնական մտքերի ու գաղափարների աւանդութիւնից, լինի այդ աւանդութիւնը շատ խոշոր, թէ նեղ գծով։ Մի բացարձակ նախասկիզբն գիտել վիճակուած չէ մեղ և ամեն անդամ կրօնական զգացման ծագման պատճառը պէտք է համարել գլխաւորապէս աւանդութեան շարունակութիւնն ու զօրութիւնը։ Ո՞րտեղից է սակայն յառաջ գալս այդ աւանդութեան սկիզբը, ի՞նչպէս է սկսուել կրօնը նախամարդկութեան մէջ և ի՞նչ պատճառներ ունի այն, բոլորովին անծանօթ է մեղ և անծանօթ էլ կմնայ, բարոյականութեան ու տրամաբանութեան սկզբնաւորութեան նման, Երևակայութեան բոլոր փորձերը՝ այդպիսի մի սկզբնաւորութիւն վերանորոգել, կատարւում են ներկայի սկզբնաւորութիւնների նմանութեամբ, որոնք ամենագլուխաւոր նախադրեալը ունին արդէն՝ կրօնական պատկերա-

ցումների գոյութիւնը։ Այդ պատճառով էլ վկրօնի սկզբնաւորութեան գաղափարն էլ անորոշ է և անարժէք, որովհետեւ կրօնի իսկական նախասկզբի մասին ոչինչ ասել չի կարելի, այլ միայն հնարաւոր է այն արտաքին պատճառուները քննել, որոնք առիթ են եղել նորա յառաջ գալուն։ Կրօնի սկզբնաւորութեան գաղափարը միայն այն ժամանակ միաք ունի, եթէ համաձայն ուրիշ հիմունքների մեղ համար արդէն մի անգամ պարզ է, որ կրօնը լոկ մի անցողական կողմնակի գիծ է, առանց սեպհական ներքին անհրաժեշտութեան, մարդկային հոգու իսկական էական գործունէութիւնների մէջ։ Բայց այս էլ պողիտիւիզմի տեսութիւնն է, որի իսկական ելակէտը ոչ թէ կրօնի սկզբնաւորութեան առեղջուածն է, այլ այն մետաֆիզիկական համոզումը, թէ կրօնը չի կարող ճշմարտութիւն բովանդակել իւր մէջ։ Ուրեմն «կրօնի սկզբնաւորութիւն» գաղափարը «կրօնի էութեան» նման պարունակում է իւր մէջ կրօնի ամբողջ պրոբլեմը, որի առանձին խնդիրները մէկ մէկ քննութեան պիտի ենթարկուին։ Իսկ այդ խնդիրները չորս են։ Կրօնի հոգեգանութիւնը, իմացաքանութիւնը, պատմա-փիլիսոփայութիւնը եւ մետաֆիզիկան։ Այս չորս հետախուզութիւնների արդինքների համագրութիւնը կասէ մեղ, թէ ինչ է ներկայ գիտութեան ըմբռնումը կրօնի նկատմամբ և ինչ է այն օգնութիւնը, որ գիտութիւնը տալ կարող է կրօնական կեանքի և կրօնի զարգացման համար։

Ա. Կրօնի հոգեգանութիւնը։ Կրօնի հոգեբանութիւնը առաջին նախադրեալն ու հիմունքն է ամեն իմացաքանական աշխատանքի կրօնի նկատմամբ, ինչպէս որ տռհասարակ հոգեբանական վերլուծութիւնը ամեն իմացաքանական հետազոտութեան հիմքն է։ Պէտք է ամենից առաջ ճանաչել երեսոյթը իւր իրականութեամբ և առանձնայատկութիւններով, նախ քան նրա արժէքի մասին խօսելը, կանութեամբ տեսութեան թոյլ կողմն հենց այս նախադրեալի նկատմամբ ցոյց տուած զանցառութիւնն է։ և մինչեւ անդամ Ելայերմախերն էլ, որ յայտնի է իւր նորը հոգեբանական ըմբռնութեամբ, շատ արագ կերպով սկսեց իւր կրօնի *

տեսաւթեան մէջ օնտօլոգիական և խմացաբանական դաշտափառներ մտցնել, Սակայն հոգեբանութեան դերը այստեղ շատ դժուար է՝ երեսյթի խոչոր բազմազանութեան, մեծ ծաւալի և ներքին աշխարհի հետ ունեցած սերտկապի պատճառով։ Ամենաառաջին նպատակը պիտի լինի ըմբռնել երեսյթը դեռ ևս իւր ամբողջ պարզութեան (Naivität) մէջ, դեռ ևս չենթարկուած դիտական բացատրութեան ու զարգացման։ Հոգեբանութիւնը պէտք է որոշէ, թէ որն է կենդրոնականը և մակերևութայինը երեւոյթի մէջ և որոնք են նրանց բնորոշ նշանները։ Կենդրոնականը ամեն տեղ էլ Աստուածայինի ներկայութեան հաւատն է, որ զգացւում է որոշ պայմանների մէջ, — աստուածայինի գաղափարը նախադրուում է արդէն իրեւ իրական—և այդ աստուածայինի ազդեցութեամբ յառաջեկած առանձնայատուկ կրօնական զգացումն ու կամքը իոկ մակերևութայինը ամեն տեղ կրօնի բարոյական և սոցիալական տարրերն են, ամենից առաջ առասպելները, որոնք իսկապէս կրօն չեն, այլ միայն սերտ կերպով կապուած են նրա հետ։

Բայց հետազոտութիւնը կարող է կամ ազդերի հոգեբանութեան շաւզով կամ անհատական հոգեբանութեան ուղիով ընթանալ։ Առաջին ուղղութեան մէջ հանգէստ են գալիս գլխաւորապէս, միատեսակ մասսայական երեսյթները, պաշտամունքի ձևերի միատեսակութիւնն ու օրէնքները և առասպելական մտածողութիւնը երկրորդ ուղղութեան մէջ գլխաւորը զգացմունքի խորութիւնն է, որը նոյնպէս ամեն տեղ միենոյն ընդհանուր դիմունի, բայց որը իրական է միշտ և միայն անհատական առանձնայատկութեան մէջ, և ուսանելու նիւթ է դառնում լոկ շնորհիւ որիէ ժամանակի կրօնական անձնաւորութեան և նրա ներքին կեանքի մասին եղած տեղեկութիւնների։ Այս բոլոր դէպքերում մենք զգում ենք ուրիշների միանգամ արդէն զգացածը և աշխատում նկարագրել այդ հոգեկան դրութիւնը մեր սեպհական կրօնական զգացմունքի օդնութեամբ։ Բոլոր

ըննութեան և հոգեբանական վերլուծութեան արդիւնքն այն է ի վերջոյ, որ ամեն կրօնի նախնական երեւոյթը միստիքական է, այսինքն հաւատ դէպի գերմարդկային զօրութիւնների գոյութիւնն ու գործունէութիւնը և նրանց հետ յարաբերութիւն հաստատելու կարելիութիւնը։ Էական գծերով ուրեմն ծզրտում է կրօնի միստիքական տեսութիւնը, այն տարբերութեամբ միայն, որ նախ կրօնը մի կոնկրետ հայեացք ունի առտուածայինի եղանակի և գործունէութեան մասին, լինի այն յայտնութեան կամ աւանդութեան միջոցով ստացուած, այն ինչ միստիքական կրօնի տեսութիւնը ի վերջոյ այս հայեացքը մակերեսութային է գարձնում և նրա փոխարէն լինում է մի առանձնայատուկ համաստուածային մետաֆիզիկա։

Բ. Կրօնի իմացարանութիւնը։ Իմացաբանական քննութեան նպատակն է պարզել կրօնի հոգեկան երեսյթի արժէքը քշարժութեան և իրական լինելու տեսակէտից։ Գլուխոր հարցն է այստեղ, թէ ինչ ձևով հնարաւոր է հոգեբանական իրողութիւններից եղրակացութիւն հանել կրօնի իրական արժէքի մասին։ Այդ հարցի պատասխանը տալ կարելի է միայն ընդհանուր իմացաբանութեան միջոցով։ Խոկ այդ հարցի պատասխանից յետոյ գալիս է երկրորդ հարցը՝ ինչ ծառայութիւն կարող է մատուցանել կրօնական կեանքի առանձնայատուկ շրջանում ծշմարիտ արժէքի այդպիսի մի հետախուզութիւնը։ Յամենայն դէպունաւելի բան չէ կարող անել, քան թէ ցոյց տալ բանականութեան էութիւնից բջիսող մի ապրիորիտական օրէնք կրօնական գաղափարների կազմութեան համար, որն իւր կողմից անշուշտ սերտ օրգանական կապակցութեան մէջ կիրնի բանականութեան մնացած ապրիորիտի հետ։ Նա կարող է փորձել ապացուցանել միայն կրօնական զաղափարների կազմութեան անհրաժեշտութիւնը բանականութեան տեսակէտից, այլ ոչ թէ կրօնի առարկայի գոյութեան ապացուցներ բերել Առհատարակ իմացաբանութիւնը գործ չունի գոյութեան ապացուցների հետ։ Նրա համար միակ հնարաւոր գոյութեան ապացուցը այն բանականութեան

տեսակէտից անհրաժեշտութիւնը որոշելն է, որ գիտութեան բոլոր ճիւղերի՝ բնափիլիսոփայութեան, պատմութեան, բարոյագիտութեան, էստետիկայի և կրօնի մէջ հանդէս է գալիս տարրեր սկզբունքների գործունէութեամբ։ Պէտք է զգոյշ լինել կրօնական գաղափարների իրականութեան ապացոյցը առանձին օբյեկտների գոյութեան ապացոյցների հետ չպարզ համար, որովհետեւ առանձին օբյեկտների ճանաչողութիւնը և ապացոյցը հնարաւոր է միւս օբյեկտների հետ ունեցած յարաբերութեան ըմբռնմամբ, այն ինչ կրօնական օբյեկտը իսկապէս մի օբյեկտ չէ միւսների նման։ Այդ պատճառով ամենագլխաւոր խնդիրը պատեղ կրօնական ապրիորիի բովանդակութիւնն ու էութիւնն է։ Այդ ապրիորին ի հարկէ կապ պիտի ունենայ միւս ընդհանուր ապրիորիների հետ, իսկ որովհետեւ այդ միւս ապրիորիների մէջ ընդհանուր գիտակցութեան համար բարոյական ամենագլխաւորն է և տրամաբանականն ու էստետիքականը միայն երկրորդական են, այդ պատճառով կրօնի իրական պարտագիր կարեռութիւնը կամ նրա բովանդակած ճշմարտութիւնը պարզելու համար կարեսը է որոշել նրա համերաշխութեան չափը բարոյականութեան և ապա նաև տրամաբանութեան ու էստետիկայի հետ։ Մի կրօնական գաղափարի իրականութիւնը կարող է շատ ու քիչ լինել, նայելով թէ ինչ չափով է նա համապատասխան և համերաշխ ամբողջ գիտակցութեանը և արդեօք այդ գիտակցութեան մէջ առաջնորդի գեր չէ կատարում։ Այդ հանդամանքի շնորհիւ հնարաւոր է տարբեր կրօններին տարբեր չափով իրականութիւն վերագրելը։ Մակայն դրանով մենք գառնում ենք կրկին գէպի կրօնի հոգեբանական ծննդաբանական իրականութիւնը և պէտք է ցոյց տանք, թէ կրօնի բովանդակած ճշմարտութիւնը ինչպէս է իրազութիւն գառնում այդ հոգեբանական ձևում։

Գ. Կրօնի պատմափիլիսոփայութիւնը։ Այդպիսով մենք վերադառնում ենք կրկին գէպի կրօնական կեանքի պատմական հոգեբանական իրականութիւնն ու բազմազանու-

թիւնը, որ ամեն տեղ որոշ կոնկրետ և գրական պատմական կազմութիւնների մէջ է հանդէս գալիս։ Բայց այժմ էական պարտականութիւն է գառնում՝ ըմբռնել այդ բազմազանութիւնը յառաջ եկած մի ներքին միութիւնից և յետագյում դարձեալ մի նորմատիւ նպատակի ձգտող։ Այդ կրօնի պատմափիլիսոփայութեան գործն է։ Հեգելի վարդապետութիւնն այս տեսակէտից մինչեւ այսօր այդ խնդրի ամենահայական լուծումն է։ Բայց այժմեան գիտութեան պահանջի համաձայն պէտք է խոյս տալ նրա զուտ մետափիլիքական փիլիսոփայական դրութիւնից (տիեզերական բանականութիւն)։ Առանց ընազանցութեան անկարելի է ի հարկէ այստեղ գործ տեսնելը, բայց պէտք է մի բնազանցութիւն ստեղծել, որ յառաջ է գալիս իրողութիւններից եղակացութիւն հանելով և ոչ թէ մի մետափիլիկա, որ իւր եղակացութիւնները հանումէ բացարձակ էութիւնից։ Պէտք է մի վախճանաբանական զարգացման օրէնք գտնել՝ ամենայն պատճամափիլիսոփայութեան վերջին և ամենագլխաւոր գաղափարը ամեն դէպքում։ Մրանով սկսում է սկզբունքային պատմափիլիսոփայական հետազոտութիւնը, որի նպատակն է զարգացման գաղափարի էութեան ու բովանդակութեան մասին վճիռ կայացնել և գլխաւորապէս տեղեկութիւն տալ բանական զարգացման տարբերութեան մասին՝ գիտակցութեան լոկ շարժումից ու յառաջախաղացութիւնից։ Յատկապէս կրօնի գիտութեան համար խնդիրն այն է գառնում, թէ որն է կրօնական զարգացման վերջնական նպատակը, դէպի ուր է գնում այդ զարգացումը, դէպի մի պատմութիւնից ազատ ընդհանուր բանականութեան կրծն, դէպի միութիւն ու խտունուրդ բոլոր եղած ճշմարտութիւններին, թէ դէպի գրական կրօնի զարգացումը։ Միւս գլխաւոր հարցն է, թէ ինչ գիրը են բռնում և ինչ նշանակութիւն ունին կրօնական զարգացման համար արդի գլխաւոր կրօնները, Որովհետեւ վերջինների մէջ քրիստոնէութիւնը յամենայն դէպի ամենաշատաւորն ու ամենահարուստն է, այդ պատճառով էլ վերջին խնդիրը կլինի քրիստոնէութեան նշանակութեան և ապագայի խնդիրը։

Դ. Կրօնի մետաֆիզիկան։ Սակայն կրօնը երբէք միայն կրօնական հաւատ յառաջ բերելու ու կազմակերպելու հոգեկան գործողութիւնը չէ։ Նա միենոյն ժամանակ դրա կան կերպով հաստատում է իւր հաւատի օբյեկտի, Աստուծոյ գաղափարի գոյութիւնը։ Խոկ Աստուծոյ գաղափարը մատցելի չէ ոչ մի այլ ճանապարհով, բան եթէ կրօնական հաւատով։ Բայց նա պնդել է աշխատում մի այնպիսի իրողութիւն, որ պէտք է որևէ է կերպով մնացած գիտական ճանաչողութեան։ Հետ համաձայնութեան մէջ լինի, եթէ մարդկային բանականութիւնը մի ներքին միութիւն է ներկայացնում։ Այդպէս սկսում է Աստուծոյ գաղափարի փիլիտոփայական ըմբռնումը, որն անշուշտ անհնար է արտածական մետաֆիզիկայի միջոցով, բայց որը պիտի ստացուի գարձեալ մետաֆիզիկական հետևութիւններ հանելով փորձնական աշխարհից։ Բայց արձակ իմացաբանական փիլիտոփայութիւնն էլ պէտք ունի այդպիսի բնագանցութեան, եթէ նա չէ ուզում պսիխոլոգիզմի և ոկեպտիքականութեան մէջ մնալ։ Սրանով կրօնի գիտութեան պրսրլեմները դառնում են սկզբունքային փիլիտոփայութեան կամ մետաֆիզիկական պրոբլեմներ։ Այդ է պատճառը, որ մենք սկզբից և եթ մերժեցինք պողիտիզմի տեսութիւնը և հետեւեցինք իդէալիզմին, որից ոչինչ չէր մնայ կրօնի մէջ, եթէ դրական փիլիտոփայութեան նախադրեալները ճիշտ լինէին։ Ապա երկրորդ գլխաւոր պրօբլեմն է այստեղ՝ հաստատել, որ տիեզերքի հիմքի և բացարձակ գիտակցութեան յարաբերութիւնն իրենց մասնակի բովանդակութիւնների հետ այնպէս է, որ միշտ յառաջ գալ պարող են նոր սկզբնաւորութիւններ և իրազութիւններ, առանց որոնց ամեն կրօնական միութը լոկ խօսք է դառնում կամ անպառաղ միստիկա։ Մի խօսքով պլուրալիզմի և աղաւառութեան պրոբլեմը հակառակ մոնիզմի, որ միայն ինքն իրեն հետ միշտ նոյնացող գոյութեան (Substanz) անհրաժեշտ ծառալումն է ընդունում։ Եթէ այդ նպատակին հանենք, այն ժամանակ կրօնի այս մետաֆիզիկան ոչ թէ միայն մի ջատագովութիւն կլինի արդէն հաստատուն

և միանգամ ընդունուած Աստուծոյ գաղափարի համար, այլ միևնոյն ժամանակ Աստուծոյ գաղափարի հիմնական վերակազմութիւն և համերաշխութիւն նորագոյն գիտական աշխարհայեացքի հետ։

Այսպիսի, կրօնի ամբողջութիւնը քննութեան նիւթ գարձնող, կրօնի գիտութեան գործն ու նշանակութիւնը այն է, որ նրա միջոցով յետ է մզւում հին եկեղեցական հեղինակաւոր ուսմունքների ազդեցութիւնը և համբերատարութեան ոգին իշխել է կարողանում։ Սակայն նրա դրական միացուցիչ գործունէութիւնը մինչև այժմ շատ անհնար է։ Կարելի էր սպասել, թէ նրա միջոցով հաշտութիւն և համերաշխութիւն կստեղծուի կուլտուրական մարդկութեան մէջ, բայց այդ տեսակէտից կրօնական և կրօնագիտական կոնգրեսաները մինչև այսօր շատ քիչ բան են տուել և գծուար թէ տան էլ։ Առհասարակ այդպիսի մեծ պայքարները իրենց վճիռն են ստանում մարդկութեան մէջ ոչ թէ գիտութեան միջոցով, այլ աւելի տարերային ուժերի։ Մեր նկարագրած կրօնական գիտութիւնը Եւրոպական կուլտուրայի ստեղծագործութիւնն է և այդ պատճառով էլ նշանակութիւն ունի միայն կուլտուրական այդ շղանի համար։

Սակայն այստեղ էլ նրա ազդեցութիւնը հաշտութիւն յառաջ չէ բերել։ Մի կողմից նա պատճառ է դարձել նորագոյն աշխարհի մի մեծ մասի կրօնից բոլորովին հեռանալուն, գիտական միջոցներ ընձեռելով նրան պլուպագանդական կամ անելու կրօնի գէմ։ Միւս կողմից նա միջոց տուեց հրէական և քրիստոնէական եկեղեցիներից հեռացածներին հետեւելու մի ընդհանուր անժամանակ, անպատմական բանականութեան կրօնի, որը տարբեր անհատների և շլրջանների մէջ դարձեալ շատ տարբեր է և չի կարողանում մի զօրեղ կրօնական շարժումն յառաջ բերել։ Վերջապէս նա ազդեցութիւն ձեռք բերեց զանազան գաւանութիւնների քրիստոնէական աստուածաբանութեան վրայ և այդպիսով մի բուռն պայքար մտցրեց աստուածաբանու-

ՅԱՅՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Հոյս է տեսել և վաճառւամ է

Մրոյն իրենիոսի (երանոսի) հետևողին առաքելոց

ՑՈՅՑՔ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՔԱՐՈՉՈԽԹԵԱՆՆ

Նորագիւտ հայերէն թարդմանութիւն նախնեաց. հրա-
տարակեցին և գերմաներէնի վերածեցին

Լից. Դր. Կարապետ Վարդապետ
և

Լից. Դր. Երուանդ Վարդապետ

Լայպցիդ. 1907. ՎԻԻ+137 էջ. Գինն է 3 րուբի.

Դիմել եջմիածին՝ Երուանդ Վարդապետին.

«Ազգային գրադարան



NL0151231

